



## Հայաստանում ընկերությունների կողմից ՉՍՊ կիրառելու անհրաժեշտությունը

Մարիա Անխելիկա Վասկես Դուսան\*

Մեր օրերում բիզնեսի ոլորտում ամենաշատ քննարկվող թեմաներից մեկը Չեռնարկությունների Սոցիալական Պատասխանատվությունն է: Ընկերությունները կառավարելու և շահույթ ստանալու համար, մեծ ուշադրություն են դարձնում սոցիալական և շրջակա միջավայրի խնդիրներին՝ հաշվի առնելով շահագրգիռ անձանց կարծիքները և փնտրելով երկարաժամկետ կայունություն:

Արդեն շատ կազմակերպություններ կան, որոնք որդեգրել են այս գաղափարը, որպես բիզնեսի կառավարում և ռազմավարական մոտեցում, իսկ խոշոր ձեռնարկությունների մեծ մասն այն ներգրավվել է իրենց ռազմավարությունում: Ներկայիս Ֆորտուն ամսագրի (ԱՄՆ-ում) 500 ընկերությունների մոտավորապես 90%-ն արդեն ընդունել է ՉՍՊ ծրագրերը և դրանք արդեն սկսել են գործնականում կիրառվել գրեթե բոլոր երկրներում և բիզնեսի բնագավառներում: Յուրաքանչյուր երկրում և բիզնես բնագավառում գոյություն ունեն մի շարք օրինակներ:

Մենք խոսում ենք այն մասին, որ սննդի հատվածի ընկերություններ աջակցում են ֆերմերներին ավելացնել իրենց եկամուտը և միևնույն ժամանակ ապահովում են որակյալ հումքի մատակարարումը ընկերություններին: Օրինակ՝ ալկոհոլային խմիչք արտադրող ձեռնարկատերերը իրականացնում են շուկավարման պատասխանատու գործունեություն՝ փորձելով կանխել սպառողների կողմից խմիչքի չարաշահումը, միևնույն ժամանակ բարելավելով իրենց հեղինակությունը: Տարբեր հատվածների արտադրող ընկերությունները կիրառում են Շրջակա միջավայրի կառավարման ծրագիրը, ինչը բերում է շրջակա միջավայրի վրա ազդեցության կրճատմանը, ջրի և էլեկտրաէներգիայի ապահովման նվազեցմանը և թափոնների վերամշակման ծրագրերի իրականացմանը, ինչը իր հերթին նպաստում է իրենց հաստատուն ծախսերի նվազեցմանը և արտադրության արդյունավետության բարձրացմանը:

Ինչ վերաբերվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրերին և հեռուստահաղորդակցման հատվածի ընկերություններին, նրանք փորձում են տեղեկատվությունը դարձնել ավելի հասանելի բնակչության համար, ինչը նաև բերում է նոր շուկայի ստեղծմանը: Նույն ձևով ծառայություն մատուցող ընկերությունները՝ խարհրդատվական և աուդիտորական, գիտակցելով, որ բիզնեսի բնագավառում մարդիկ ամենամեծ արժեքն են հանդիսանում, իրենց մարդկային ռեսուրսների կառավարման բնագավառում կիրառում են մշակութային բազմազանության և սեռային հավասարության քաղաքականությունը՝ փորձելով բարձրացնել աշխատողների մոտիվացիան և արտադրողականությունը:

Չնայած, որ ներկայումս, ՉՍՊ-ն բազմազգային (multinational) ընկերությունների կողմից դառնում է ավելի կիրառելի, այն կարող է ընդգրկվել նաև այլ տարբեր կազմակերպությունների քաղաքականության մեջ: ՉՍՊ-ն գոյություն ունի և պետք է լինի կենսունակ բոլոր՝ մեծ, միջին և փոքր ձեռնարկությունների համար: Հատկապես զարգացող երկրներում, բոլոր տեսակի ընկերությունները, որպես շուկայի ակտիվ դերակատարներ, ներգրավված լինելով սոցիալական մարտահրավերների մեջ, ակնհայտ են դարձնում իրենց հզորությունը՝ որպես սոցիալական իրականության փոխակերպողներ:

Ես ապրում եմ Հայաստանում մոտ 3 ամիս, Բի Էս Սի-ի ([www.bsc.am](http://www.bsc.am)) հետ աշխատելով ՉՍՊ ծրագրի վրա, որը համարվում է իրենց գործունեության վեց ոլորտներից մեկը: Բի Էս Սի-ն ՉՍՊ գործընթացը մշակել է 4 տարվա ընթացքում՝ սկսելով տեղական

ձեռնարկատերերի համար սեմինարներից, հետագայում իրականացնելով նաև ախտորոշում և աջակցելով Ազրո-ինդուստրիալ տեղական գործարարներին և ֆերմերներին կիրառելու ՉՍՊ կառավարման հիմունքները: Ես նկատեցի, թե ինչքան կարևոր է Բի Էս Սի-ի դերը Չեռնարկությունների սոցիալական պատասխանատվության տարածման գործում Հայաստանի նման մի երկրում, որը այս բնագավառում լի է մարտահրավերներով և հնարավորություններով:

Գոյություն ունեն հստակ կարիքներ, ինչպես օրինակ շրջակա միջավայրի խնամքի անհրաժեշտությունը, աղբի վերամշակումը, իրականացնել արդյունավետ գործողություններ կոռուպցիան և կաշառակերությունը կանխելու ուղղությամբ և աջակցել շրջանների զարգացմանը: Ինչպես շատ զարգացող երկրներում, այնպես էլ Հայաստանում, ակնհայտ է դառնում ՉՍՊ-ի կիրառումը բիզնեսի զարգացման գործում:

Միևնույն ժամանակ Հայաստանում ՉՍՊ կիրառելու համար պահանջում են համապատասխան գործողություններ: Շատ քիչ բազմազգային կազմակերպություններ կան երկրում, որոնք կարող են առաջ քաշել ՉՍՊ գաղափարը և տարածել այն՝ ստեղծելով կիրառման մի ցիկլ, որում կներգրավվեն ընկերություններ (տեղեկան), սպառողներ, կառավարություն և առաջնորդներ:

Հայաստանում տեղական դերակատարները, հենց իրենք կազմակերպությունները, ՀԿ-ները և միջազգային կառույցները շատ գործ ունեն անելու կազմակերպություններին խրախուսելու ՉՍՊ բնագավառում սոցիալ պատասխանատու ռեզիդենտ կազմակերպություն դառնալու գործում, միևնույն ժամանակ նրանք մշակում և իրականացնում են գործողություններ, որոնք աջակցում են իրենց բիզնեսի տնտեսական հզորեցմանը և ազդեցություն են ունենում շահագրգիռ անձանց վրա: Պետք է համագործակցել նաև կառավարության հետ և ակտիվ մասնակցություն ունենալ ՉՍՊ տարածելու և կիրառելու գործում, ինչը հիմնական միջոց է հանդիսանում այս գործընթացի հաջողության համար, ձեռք բերել համախոհներ և ՉՍՊ միջոցով որոշել, թե ինչպիսի սպրաճքներ և ծառայություններ են գերադասելի: Այս ամենը իրենից ներկայացնում է մի գործընթաց, ինչը ժամանակ է պահանջում:

Որպեսզի ընկերությունները հասնեն իրենց նպատակներին, օգտագործելով հնարավորությունները և լինեն կայուն, իրենք կիրառում են ՉՍՊ-ն, որպես իրենց բիզնեսի ռազմավարության հիմք: Համաձայն այժմյան տնտեսության կայուն զարգացման տեսության, բիզնեսի և համայնքների երկարաժամկետ աճի և գոյատևման միակ միջոցը տնտեսության զարգացումն է սոցիալական հավասարակշռվածության և տարածաշրջանի պահպանման հետ զուգահեռ: Ռազմավարական ՉՍՊ-ի գործողությունները պետք է վերադառնան ժամանակի ընթացքում, վաճառքի ծավալների մեծացման, շահույթի, արդյունավետության, արտադրողականության և բիզնեսի արդյունքների բարելավման միջոցով:

\* Մարիա Անխելիկա Վասկես Դ. արդյունաբերական ինժեներ է Կոլումբիայի Անդես համալսարանից: Նա ավելի քան 4 տարի աշխատել է Կոլումբիայում Կոկո-Կոլա ընկերության արտադրական հատվածում և Ամերիկայի ՀԿ սոցիալական հատվածում Անցումային ժամանակահատվածում փախստականների համար արվեստ (Art for Refugees in Transition). Այժմ նա Իսպանիայի Բարսելոնա համալսարանում սովորում է մագիստրատուրայում՝ ուսումնասիրելով Չեռնարկությունների Սոցիալական Պատասխանատվություն, հաշվապահություն և սոցիալական աուդիտ: Նա Հայաստան է եկել 2008թ-ի փետրվար ամսին՝ AIESEC միջազգային ուսանողական կազմակերպության միջոցով Բի Էս Սի-ի հետ ՉՍՊ գործընթացի վրա աշխատելու համար: